

**Տ. ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ԶԱԲԱՐՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱՐՈՋԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻՆ**

(7 ապրիլի 2003 թ.)

*«Փառք քեզ, Աստուած, փառք քեզ,  
յաղագս արևելայնի, Տէր, փառք քեզ»:  
(Ժամագիրք)*

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոզոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացյալ քույրեր և եղբայրներ,

Տիրոջ կամոք և ողորմությամբ արժանացանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորանից մեր անդրանիկ և Սուրբ Պատարագը մատուցելու երանելի օրվան:

Դեռևս 40 օրեր են անցել այն ժամանակվանից, երբ ծնրադիր, կամավոր կերպով ընծայաբերվեցինք Տաճարին ու, սրբանալով սուրբ ձեռնադրություն և օծում, համալրեցինք կուսակրոն քահանայության շարքերը, եկանք լրացնելու սուրբ ուխտի միաբանությունը:

Խնկարույր աղոթք, գոհաբանություն Ամենաբարձրյալին, խոնարհագույն երախտագիտություն Վեհափառ Նայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսին, Ում անմիջական խնամածության ներքո կրթել և կերպել ենք մեր հոգևոր ետը: Ընդհակալանքի խոսք եմ ուղղում նաև մեր հոգևոր ծնողին՝ Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզև արքեպս. Մարտիրոսյանին, որ արժանացրեց մեզ սուրբ օծման և ձեռնադրության: Նաև մեր շնորհակալությունն ենք հայտնում Սևանի Վազգենյան Նոզևոր Դպրանոցի, Էջմիածնի Գևորգյան Նոզևոր Ընմարանի Կրեւս-դասախոսական կազմին և բոլոր նրանց, ովքեր իրենց ավանդն ու լուսնան ունեն մեր հոգևոր-կրթական կյանքից ներս:

Սիրելիներ, այսօր Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին փոխախմբում է Ս. Աստվածածնի Ավետումը: Աստվածածինը մեր կյանքում ամենակարարելարիպ կերպարն է, գլխավորագույնը մայրերի մեջ: Ամենասրբոտի Կույսը դարձավ այն մաքուր անոթը, որի միջոցով ծնվեց Աստծո Որդին՝ Նիսուս Քրիստոս:

Ինչպես Սուրբ Գրիգոր Տաթևացին է ասում. «Աստվածընկալ հարս, աստվածաբնակ փաճար: Նախահոր փրկիչ, նախամոր ազարիչ: Օրենքի ավետում, սրվերի դաղարում, անհարսնացյալ հարս, երկնային առագաստ, մեղավորների հույս, նեղյալների ապավեն, փրկմանների ուրախություն, վշտացածների մխիթարություն, եկեղեցու պարծանք, հավաքացյալների առ Աստված աղերս»:

Իսկպաես Ս. Կույս Մարիամը դարձավ այն աստվածընկալ հարսը և աստվածաբնակ փաճարը, որ խոնարհությամբ ընդունեց հրեշտակի ավետիսը և դարձավ Աստվածամայր: Տիրամայրը դարձավ մեծագույն բարեխոսն ի Տեր բոլոր հուսացողների համար:

Ավետարանից մենք իմանում ենք, որ Ամենասրբոտի Կույսը նշանված էր Նովսեփի հետ, որը Դավթի ցեղից էր: Եկեղեցական սրբազան ավանդությունն ասում է, որ Մարիամը Նո-

վակինմի և Աննայի դուստրն էր: Վերջիններս անգավակ էին ծերացել և միայն առաջացած փարիքում որպես ուխտի գավակ ունենում են Մարիամին, որին ընծայում են փաճարին, իսկ չափահաս փարիքում փաճարի հոգևորականները նրան հանձնում են Նովսեփի խնամքին:

Նովսեփը չնայած Դավթի ցեղից էր սերել, սակայն իշխանական դիրք չուներ, այլ պարզապես մի հասարակ հյուսն էր:

Գաբրիել հրեշտակը հայտնվելով Մարիամին ավելում է, որ նա պետք է հղանա և Մեսիայի մայր դառնա: Երբ Մարիամը շփոթվում է իր հղության մասին լսելով, քանի որ կույս էր, հրեշտակը հիշեցնում է Սուրբ Նոգո գորության մասին և որպես օրինակ բերում իր ազգականին՝ Եղիսաբեթին, որը հղացել էր ծերության հասակում: Եվ Մարիամն էլ պետք է հղանար՝ կույս մնալով հանդերձ: Ամենասրբուհի Կույսը հրեշտակային ավելիսն ընդունեց խոնարհությամբ և իրեն ընծայաբերեց աստվածային կամքի կատարմանը:

Սիրելի հավաքացյալներ, այսօր փոռն է նաև մեր մայրերի ու քույրերի: Ի՞նչ է մայրությունը՝ սրբություն, մաքրություն, որը մարդկային կյանքեր է պարզևում և սնուցում, կրթում ու մեծացնում:

Ելնելով այսօրվա փոռի խորհրդից՝ մեր շնորհավորանքն ենք բերում Ձեզ՝ սիրելի մայրեր և քույրեր, ու պարզամտ, որ հանձին Ս. Կույս Մարիամ Աստվածածնի փորձեք փեսնել յուրաքանչյուրդ Ձեզ, դարձնեք Ձեր կյանքի անփոխարինելի դասն ու օրինակը: Այն ժամանակ ամեն ինչ լավ կլինի և պտուղը՝ բարի: Քանզի փեսնում ենք, որ, ցավոք, ո՛չ բոլոր մայրերն են սրբությամբ կատարում իրենց պարտականությունները, որն էլ փխուր հեղևանքների է հանգեցնում:

Թող Տիրամոր բարեխոսությունը ուղեկից և ապավեն լինի ամենքիդ ձեր անցնելիք ճանապարհներին այժմ և միշտ և հավիտյան հավիտենից, ամեն: